

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունվարի 5-ին, երկուշաբթի.—Ճրագալույց Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր, երեկոյան ժամը 17-ին, Մայր տաճարում հանդիսավորությամբ կատարվում է Ճրագալույցի արարողությունը:

Արարողության ընթացքում հոգևոր հայրերն ու ճեմարանի ուսանողությունը ընթերցում են Ս. Գրքի համապատասխան հատվածներ, որից հետո սկսվում է Ճրագալույցի ս. պատարագը: Պատարագիչն էր Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Պատարագիչ սրբազան հայրը «Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ քարոզ խոսեց «Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ: Հովիվքն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի» (Շարական) բնաբանով (տես էջ 39):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը նախագահեց Ս. Ծննդյան նախատոնակի արարողությանը:

Նախատոնակից հետո Հայոց Հայրապետը առաջնորդվեց Վեհարան, ուր և ընդունեց Մայր Աթոռի միաբանության շնորհավորանքները:

Հունվարի 6-ին, երեքշաբթի.—Տօն Ծընընդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր, առավոտյան, տոնական ժամերգությունից հետո, օրվա մեծ տոնի առթիվ, Ամենայն Հայոց Հայրապետը ս. պատարագ է մատուցում Մայր տաճարի Ավագ Ս. Սեղանի վրա: Պատարագիչ Վեհափառ Հայրապետին սպասարկում են Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը, Տ. Զավեն աբդ. Խաչատրյանը և Տ. Պարգև աբդ. Մարտիրոսյանը, ինչպես նաև Մայր Աթոռի սարկավագաց դասը:

Մայր Աթոռի զանգերի ավետաբեր ղողանջների ներքո հնչում է Փրկչի Ծննդյան մեծ ավետիսը՝ «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը բովանդակալից քարոզ է խոսում՝ շնորհավորելով հայրենաբնակ ու Սփյուռքում գտնվող ողջ հայությանը Նոր տարվա և Ս. Ծննդյան տոների առթիվ (տես էջ 8):

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը Ավագ խորանի վրա կատարում է Ջրօրհնյաց հանդիսավոր կարգը՝ ոգեկոչելով հիշատակը Հորդանան գետում Քրիստոսի մկրտության Ս. Հովհաննես Մկրտչի ձեռքով:

Պատարագից հետո Վեհարանի սեղանատանը Վեհափառ Հայրապետի կողմից տրվում է ճաշկերույթ, որին մասնակցում են Մայր Աթոռի եպիսկոպոսաց դասը, Գերագույն Հոգևոր Խորհրդի պատվարժան անդամները, Մայր Աթոռի բաժինների ղեկավարներ և այլ հրավիրյալներ:

Ճաշկերույթին մասնակցում էին նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ստեփան Վարդանյանը և տեղակալներ Անդրանիկ Հասրաթյանն ու Ռաֆիկ Զարգարյանը:

Ճաշկերույթի ընթացքում Վեհափառ Հայրապետը պաշտոնապես շնորհավորեց Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ՝ ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ, ՍՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ տիար Գրիգոր Խանջյանի և բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր տիար Պիոն Հակոբյանի 60-ամյա հոբելյանները: Ներկաները ողջույնի ու շնորհավորանքի խոսքեր ասացին:

ԹՂԹԱԿԻՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲԱՇԽՈՒՄ Է ԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՊԱՏԳԱՄԸ Ս. ԾՆՈՒՆԴԻ ԱՌԹԻՎ

(6 հունվարի 1987 թ., Ս. Էջմիածնի Մայր տաճար)

ՄԻ ՊԱՀ ԶՐՕՐՀՆԵՔԻ ՀՈԳԵՊԱՐԱՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ
(6 հունվարի 1987 թ., Ս. Էջմիածնի Մայր տաճար)